ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

16 դեկտեմբերի 2020թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Բաղալով

Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Հայկ Հովհաննիսյան, Արեգ Ափոյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման և ամփոփման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 04.12.2020թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2020 թվականի դեկտեմբերի 11-ին, Ժամը՝ 15:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի 11 դեկտեմբերի ժամը՝ 15:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N 1 չափաբաժնի մասով նիստը կասեցնել և մասնակիցներ «Մատակարար.ԱՄՎ» ՍՊԸ-ին, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին, «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին, «Ստարտ կոպի Գրուպ» ՍՊԸ-ին, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ին, «Արգիշտի Մկրտչյան Ասատուրի» Ա/Ձ և հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի է ունեցել 16.12.2020 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց-63 հասցեում: Նիստին ներկա էին «Մատակարար. ԱՄՎ» ՍՊԸ-ի, «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ի, «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի, «Մանվել Ջալավյան» Ա/Ձ-ի, «Արգիշտի Մկրտչյան Ասատուրի» Ա/Ձ-ի ներկայացուցիչները համապատասխան լիազորագրերով նիստին ներկա չէր միայն «Ստարտ կոպի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

1.4 Ստորև ներկայացվում է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով կատարված նվազեցման ամենացածր գնային առաջարկը:

Չափաբաժին	Անվանում	Ընկերություն	Նոր իջեցված գնային առաջարկ		
1	Համակարգչային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ	**450000 /Արժեք/**	**0 /ԱԱՀ/**	**450000 /Գին/**

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար համակարգչային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-21/3» ծածկագրով գնման ընթացակարգի՝ N 1 չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

2.3. «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Բադալով

Քարտուղար՝ _____ Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ

1 _____ Ա. Ափոյան

2 _____ Հ. Հովհաննիսյան